

- 61 Իսկ տեղւոյս Հայք փոյթ մի ծանարտակաւ  
Խընդրեալ ի նոյնոյ աղերամամբ մեծաւ  
Ընկալնուն ըղձնորհ յատուկ հրամանաւ  
Առ թաղել զՍարգիս ընդ մեր տաճարաւ :
- 62 Յետ որոյ Սարգիս պատուիրէր ինքնին  
Բըրել պատրաստել ըզփոս տապանին,  
Որ ամօք յառաջ կազմ ամենեւին  
Ըսպասէր նորուն հոգւոյ անօթին :
- 63 Ապայ զայրացեալ անդրէն ախտ Սարգսի  
Յօգոտոս ամսեան է՝ ի Սեպտեմբերի՝  
Ճընչէր ըզնա միշտ ջերմիւ ինչ կարի  
Թէ եւ մերթ հանգչէր ի ժամ գիշերի :
- 64 Յայնրմ միջոցի յամէն շարաթու  
Խոստովանութեամբ եւ զըղջմամբ ազգու  
Հաղորդիւր ի տան միշտ յառաւօտու  
Սուրբ՝ մարմնով է՝ արեամբ փրկչին կենսատու :
- 65 Ի վերջին աւուրս սոյն իմ վարդապետ  
Բազկատարած լեալ՝ օրհնէր զիս յաւէտ  
Առ ծառայելոյս նըմա ցայն իսկ կէտ,  
Խնդրեալ ի Տեառնէ ինձ վարձ շահաւէտ :
- 66 Որ եւ խրրատու քաջալերական  
Համոզէր զիս յար յիւրում հեծութեան  
Հետեւօղ լինել առաքինութեան,  
Հերքիչ սընտոեաց, մերժիչ մոլութեան :
- 67 Այսուիկ եւ այլովք ազգոյ յորդորիւ  
Թէպէտ ամօքէր զանձն իմ լի վըշիւ,  
Այլ զըրկիւս յիւրմէ ըզսիրտ իմ խըստիւ  
Աղեխարշ գործեալ՝ լընոյր աղետիւ :